Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 16-ի N 33 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 10-ի N 618-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու (այսուհետ՝ արդյունաբերական գոտի) ստեղծման նպատակով հայտերը ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքով սահմանված իմաստը:

2. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Արդյունաբերական գոտին կարող է ստեղծվել պետական կառավարման մարմինների, տարածքային կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մասնավոր հատվածի նախաձեռնությամբ (այսուհետ՝ հայտատու):

4. Արդյունաբերական գոտու ստեղծման նպատակով հայտատուն էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հայտ, որում ներառվում են՝

1) դիմում.

2) ամփոփագիր, որը ներառում է արդյունաբերական գոտու նկարագիրը, ստեղծման նպատակը, գործունեության հիմնական ուղղությունները, գտնվելու վայրի

ընտրության հիմնավորվածությունը, գործառնական տեսակի և գործունեության տեսակների հիմնավորումը, տարածքի հատակագիծը, տարածքում շինությունների առկայության դեպքում նաև շինությունների նախագիծը, մատուցվելիք ծառայություն-ների ցանկը.

3) գործարար ծրագիրը, որը պետք է համապատասխանի սույն կարգի 4-րդ գլխում նշված չափանիշներին:

5. Լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո ներկայացված փաստաթղթերի ամբողջական լինելու դեպքում այն 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված մշտապես գործող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամներին, իսկ ներկայացված հայտում տեխնիկական թերությունների առկայության կամ հայտի փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է հայտատուին՝ առաջարկելով 2 աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեխնիկական թերությունները կամ համալրել փաստաթղթերի ցանկը:

6. Լիազոր մարմինը հայտի շտկված կամ համալրված տարբերակն ստանալուց հետո այն 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկում է հանձնաժողովի անդամներին:

7. Հանձնաժողովի անդամները 20 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են հայտը և դրանում անճշտությունների կամ թերությունների բացակայության դեպքում գնահատում են այն՝ ելնելով սույն կարգով սահմանված չափանիշներից, և էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին են ներկայացնում հայտի վերաբերյալ գնահատական:

8. Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերում առկա են բովանդակային անճշտություններ կամ թերություններ, ապա հանձնաժողովի անդամները հայտն ստանալուց 20 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում են լիազոր մարմնին, իսկ վերջինս տեղեկատվությունը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է հայտատուին՝

առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել հայտի շտկված փաթեթը:

9. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված ժամկետում հայտի շտկված փաթեթը ներկայացվելու դեպքում լիազոր մարմինն այն ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկում է հանձնաժողովի անդամներին, որոնք 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը և դրանց ամբողջականության, անճշտությունների և թերությունների բացակայության դեպքում գնահատում են ներկայացված հայտը՝ ելնելով սույն կարգով սահմանված չափանիշներից, և էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին են ներկայացնում հայտի վերաբերյալ գնահատական:

10. Հայտի անբավարար գնահատման հիմք է հայտի՝ սույն կարգով սահմանված գործարար ծրագրին ներկայացվող պահանջներին անհամապատասխանությունը:

11. Սահմանված ժամկետում հանձնաժողովի անդամի կողմից հայտի վերաբերյալ գնահատական չներկայացվելու դեպքում հայտի գնահատման ամփոփման ժամանակ հանձնաժողովի տվյալ անդամի գնահատման արդյունքները հաշվի չեն առնվում:

12. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների գնահատականները ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում, ամփոփելով հանձնաժողովի անդամների գնահատականները, դրանց հիման վրա կազմում է հայտի վերաբերյալ համապատասխան եզրակացություն և այն ներկայացնում լիազոր մարմնին:

13. Լիազոր մարմինը հանձնաժողովի համապատասխան եզրակացության հիման վրա՝ այն ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ, այն եզրակացության հետ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է շահագրգիռ մարմիններին և վերջիններիս կարծիքի հիման վրա լրամշակվելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն:

14. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունում է համապատասխան որոշում հայտատուի հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ՝ անկախ հանձնաժողովի անդամների դրական գնահատման արդյունքներից և դրա մասին տեղեկացնում է լիազոր մարմնին:

15. Լիազոր մարմինը սույն կարգի 14-րդ կետով սահմանված որոշման ընդունումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ ակտի ընդունման մասին էլեկտրոնային եղանակով իրազեկում է հայտատուին:

16. Հայտատուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր տրամադրած սխալ տեղեկատվության հետևանքով առաջացած վնասի համար:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

17. Հանձաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից, արդարադատության, ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էներգետիկայի, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինների, քաղաքաշինության, հարկային, մաքսային բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմինների ներկայացուցիչներից: Հանձնաժողովի կազմում կարող են ներառվել նաև Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության, Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի, ինչպես նաև այլ ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ: Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալն է,

իսկ քարտուղարը՝ լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը: Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև լիազոր մարմնի այլ ներկայացուցիչներ:

18. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

19. Հանձնաժողովի նիստ գումարվում է հետևյալ դեպքերում՝

1) հանձնաժողովի նախագահի աշխատակարգային որոշմամբ, եթե գնահատման արդյունքում հայտը չի բավարարել անցողիկ շեմը (անցողիկ շեմ է համարվում հայտով ներկայացված գործարար ծրագրի գնահատման 51 և ավելի միավորը).

2) եթե հայտը չի գնահատվել հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի կողմից.

3) հանձնաժողովի անդամի կողմից հանձնաժողովի նախագահին ներկայացվել է հիմնավորում դրա լրացուցիչ քննարկման անհրաժեշտության վերաբերյալ:

20. Հանձնաժողովի նիստերի հրավիրման օրվա, վայրի և ժամանակի մասին հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային եղանակով ծանուցում է նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

21. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների 2/3-ի մասնակցության դեպքում, իսկ հանձնաժողովի անդամների 2/3-ից պակաս լինելու դեպքում նիստը համարվում է չկայացած, և նշանակվում է նոր նիստ:

22. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են տվյալ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

23. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է, հանձնաժողովի նախագահի որոշմամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

24. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի համար կազմվում է արձանագրություն: Արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած մյուս անդամների կողմից:

25. Փաստաթղթաշրջանառությունը, այդ թվում՝ արձանագրության հաստատումը, իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

26. Հանձնաժողովի նիստի համապատասխան արձանագրության հիման վրա լիազոր մարմինը կազմում է համապատասխան եզրակացություն և արձանագրության հետ ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

27. Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է արդյունաբերական գոտի ստեղծելու և արդյունաբերական գոտու կազմակերպիչ ճանաչելու կամ մերժելու մասին համապատասխան որոշում՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

28. Լիազոր մարմինը սույն կարգի 27-րդ կետով սահմանված որոշման ընդունումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ ակտի ընդունման մասին էլեկտրոնային եղանակով իրազեկում է հայտատուին:

4. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

29. Գործարար ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) գնահատում է հանձնաժողովը՝ յուրաքանչյուր գնահատման չափանիշի համար կիրառելով կշռային գործակիցներ, որոնց համախումբը չպետք է գերազանցի 100 միավորը: Ելնելով արդյունաբերական գոտու գործառնական նշանակությունից՝ յուրաքանչյուր չափանիշին տրվող կշռային գործակցի մեծությունը յուրաքանչյուր անգամ սահմանվում է հանձնաժողովի կողմից՝ նախքան գնահատում իրականացնելը: 51 և ավելի միավոր ստացած ծրագիրը գնահատվում է դրական:

30. Ծրագիրը գնահատվում է՝ ելնելով հետևյալ չափանիշներից՝

1) ծրագրի համապատասխանությունն արդյունաբերական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին.

2) տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը.

3) ընդհանուր ներդրումների ծավալները և ուղղությունները.

4) տեղեկատվությունը հիմնական ռազմավարական գործընկերների կամ հնարավոր շահագործողների մասին (առկայության դեպքում).

5) արդյունաբերական գոտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումն ու ծառայությունների մատուցումն ապահովող իրավաբանական անձի կողմից շահագործողներ ներգրավելու ուղղությամբ քաղաքականության առկայությունը։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ